կացրել աւագ խորանի Հինգշաբթի և Շաբաթ օրերը «հանապազ»։ Սորան անմիջապէս կցուած է և իւր ամուսնու արձանագրութիւնը, շատ փչացած, որից երևում է, թէ միաբանել է սուրբ ուխտին և եկեղեցուն խաչ և այլ բազում արդիւնք տուել (Ցաւել. Ա. 23)։ Գրիգորի մի երկրորդ արձանագրութիւն գտնւում է հարաւային պատի վերայ դրսից, երկրորդ լուսամուտից դէպի արևելք, շատ եղծուած, որով նուիրում է «զմեծ հողն . . .» և «այլ արդիւնք» (Ցաւել. Ա. 124, պատկ. 180). իսկ նորա կնոջ երկրորդ արձանագրութիւնը արևմտեան պատի վերայ՝ աջ դասում (պատկ. 182) իւր Վասակ որդու և կողակից Գրիգորի անունների յիշատակութեամբ. «աւգնեցի տան . . .(ս եւ ետու սպ)ասն պատուական», ստանալով դորա փոխարէն երկու պատարագ Վարդավառի Շաբաթ և Կիւրակի օրերը (Ցաւել. Ա. 125)։ Արձանագրութեան սկսուածքից, «ես Զաքս մայր Վա(սակայ եւ կե)նակից Գրիգորս...» պէտք է եզրակացնել, որ մեռած է ամուսինը և կարևոր անձը որդին է, որով և բնորոշւում է Զաքի ով լինելը։ Ուրեմն և հաստատ կարող ենք ասել, որ 1222 թուից տարիներ յետոյ է գրուած, երբ նահատակուեցաւ Գրիգոր Խաչբակեանը։

Տաճարի շինութեանը մասնակից են եղել և ուրիշները. եկեղեցու ներսը՝ աջակողմեան աւանդատան դրան գլխի արձանագրութեան համեմատ՝ ոմն Ռստակէս քահանայ ստացել է այդ խորանը, ուրիշ խօսքով հոգացել է դորա ծախսը, փոխարէնն ստանալով երեք ժամ (Ցաւել. Ա. 126). ներսից՝ հարաւային պատի արձանագրութեան համեմատ՝ «Սարգիս որդի Սմբատա թոռն Շղեանց» ստացել է այդ կողմի խորանը, որի համար սպասաւորները նշանակել են երեք պատարագ, մէկը իւր, միւսը հօրը և երրորդը մօրը՝ Նրճսին (Ցաւ. Ա. 127)(*)։ Հարաւային պատին դրսից՝ հարաւ-ա-

Պատկեր 180.

նագրութիւնը արևմտեան պատի վերայ՝ աջ դասում (պատկ. 182) իւր Վասակ որդու և կողակից Գրիգորի անունների յիշատակութեամբ. «աւգնեցի տան . . .(ս եւ ետու սպ)ասն պատուական», ստանալով դորա փոխարէն երկու պատարագ Վարդավառի Շաբաթ և Կիւրակի օրերը (Ցաւել. Ա. 125)։ Արձանագրութեան սկսուածքից, «ես Զաքս մայր Վա(սակայ եւ կե)նակից Գրիգորս...» պէտք է եզրակացնել, որ մեռած է ամուսինը և կարևոր անձը որդին է, որով և բնորոշւում է Զաքի ով լինելը։ Ուրեմն և հաստատ կարող ենք ասել, որ 1222 թուից տարիներ յետոյ է գրուած, երբ նահատակուեցաւ Գրիգոր Խաչբակեանը։

Տաճարի շինութեանը մասնակից են եղել և ուրևելեան անկիւնի բարձր, կիսատ արձանագրութեամբ Պատրոնիկ և Արխունդիա գնել են «ի շինուած սորա» մեզ անյայտ նիւթեր և ստացել են «ի ժ։ բ։ աւր ժամ» (Ցաւել. Ա. 128, պատկ. 180)։

Թուականով մի ուրիշ արձանագրութիւն ունինք դրան կամարի գլխին դրսից՝ մի անկանոն կիսաբոլոր-

(*) Ուվարովայի հրատարակութեան մէջ (եր. 56) այս արձանագրութիւնը թուագրուած է «ՈՐ» (= 1159), որ անկարելի է. մենք չենք կարողացել կարդալ, ուստի և թիւը չենք նշանակել. բայց ինքնին հասկանալի է, որ ԺԳ. դարի առաջին քառորդում շինուած եկեղեցու վերայ չէր կարող այդ թուականի արձանագրութիւն լինել շինութեան մասնակցութեամբ։ Հաւանօրէն պէտք է կարդալ ՈՀ (= 1221)։